

մենացեալ Լուսաւորչին համար ալ (ԱզԹ. 631), որպէս թէ չարբենալն անծանօթ ազնուականաց կենցաղին մէջ, անապատին միայն սեպհական լինէր:

Արշակունեաց սպառելէն վերջ եւս տակաւին նախանձայուզութեամբ մը պահուած կը գտնենք շատ դարեր մեր աւագաց այս ախտը, իբրեւ սրբազան աւանդ մը, կրօնական վարդապետութիւն մը, ծէս մը: Արծրունին «Աշոտ, այլ եւ ամենայն իշխանքն Հայոց», կը գրէ ժամանակակից մը, իրենց կեանքը կ'անցնէին «անառակութեամբք եւ արբեցոչքեամբք» (Արծ. 243): Գրիգոր վարդապետի մեծատունը նոյնպէս հանապազորդ սովորութեամբ մը «զգինին րմպէին եւ զմայլեալ արբենային» (Ողբ): Էւ արծրունի արքայն Գագիկ, ի լրումն այգեգործութեան համար թափած ջանքերուն (աստ, 21), եւ չշատանալով իւր տաճարի որմոց վրայ խրախճանական տեսարաններով շրջապատուիլ (աստ, 211), աւելի յառաջ գնաց, եւ իւր զինեճանութիւնը նուիրագործեց, տարօրինակ ու ցուցամուլ մտածութեամբ մը քանդակելով զայն, ինչպէս յիշեցինք այլուր (75), Աղթամարայ սրբավայրին որմոց բարձրութեան վրայ, ուր ինքն իսկ պաշարուած ողկոյզներէ, կը ճմլէ զանոնք իւր բաժա-